ձին կալեալ, քո քաղցր ձայնիւդ և անուշ եղանակաւդ պարտիս միշտ հոգևորապէս զուխտաւորսն մխիթարել ի մէջ Սրբոյ Աթոռոյդ, և որպէս որ՝ լուսաւորեալ հոգի քեռին (Յովհաննէս Հաննէ եպս.) ձեր հաւատարմաբար ծառայեաց Սրբոյ Աթոռոյդ. նոյնպէս և դուք մինչև ցայժմ վարեցաք. խնդրեմ, ըստ նմանութեան քեռոյն ձերոյ, դուք ևս կրկին զհաւատարմութիւնն ի ձեռաց չթողուք, և որպէս որ լուսահոգի երանելի մեծ վարդապետ հայրն մեր (Շղթայակիր), որ երկու աչօք հայէր ի ձեզ, ի գալն այսր. Աստուծով մեք ևս նոյն աչօքն կը հայիմք ի ձեզ. (Ա. մանուլ, 1894, էջ 426-427)։ Տիրացու Յովհաննէս յիշատակներ թողած է 1734ին Ս. Աստուածածնի եկեղեցիին մէջ։

ՅԱԿՈԲ ՍՐԿ. ՊՕՂՈՍԵԱՆ, ՋԱՔԱՐԵԱՆՑ, ՇՈՒՇԵՑԻ. — Մբ. 1860ին Ս. Յակոբի վանքին, կ'ընդօրինակէ, Անտառ այրաբանութեան գիրքը։

ՅԱԿՈԲ ՎՐԴ. ԱԳՇԷՀԻՐՑԻ կամ ԼԻԻՍՏՐԱՑԻ. — Մբ. Զռ. 1807ին. ժամանակ մը վարած է Ակնայ նուիրակի պաշտօնը. Փկե. (1815-18). 1818ին Ազգ. Պատրիարքարանի կողմէն պատուիրակ Երուսաղէմի մէջ։ Այս պաշտօնէն առաջ՝ Ագշէհիր գտնուած միջոցին՝ Սուլթան Մահմուտի հրովարտակը կը ղրկուի Դամասկոսի կուսակալին, որպէս զի Երուսաղէմէն տարեկան տուրք գանձուի միայն 40,000 ղրշ. եւ ոչ աւելի. (Դիւան, Գիրք ժ. էջ 466)։ Եպս. կը ձեռնադրուի 1820ին. Էջմիածինէ դարձին Պոլիս կը մնայ և կ'ընտրուի Փոխանորդ, բայց հրաժարելով կը մեկնի իր ծննդավայրը՝ Ագշէհիր։ Գաբրիէլ պտրք. քանիցս կը գրէ որ վանք դառնայ. բայց ան չի համակերպիր. 1822ին կարճ միջոց մը միայն Երուսաղէմ կը մնայ և յետոյ դարձեալ կը մեկնի։ 1824ին Գարթալցի Դիոնեսիոս եպս.ի հետ Պերութի մէջ կը թողու եկեղեցական սքեմը և բողոքականութիւնը կ'ընդունի, ու կ'ամուսնանայ։ Յակոբ եպս.ի մասին Շահխաթունեան իր Ժամանակագրութեան մէջ կը գրէ հետևեալը. «Ի մեծի պահոցն՝ մինչ էր ի Ս. Երուսաղէմ, ի վանս Ս. Առաքելոյն Յակոբայ, Ագշէհիրցի Յակոբ եպս. միաբանն սոյն Աթոռոյ ըստ իւրն ընաբոյս բարուց, որպէս թէ՝ ձանձրացեալ ի նոյն միաբանից. յառաջագոյն խորհրդակցեալ ընդ Գաղղիացի եպիսկոպոսի միում գնայ ի մէջ նոցա և կին առնու և ձեռնտուութեամբ